



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
481

1999



43935-Ա.Կ.

ՀՐԱՆԻՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Կ. ԳՈԼԻՍ

ՆԱՄԱԿ ԵՐՐՈՐԴ

ԱՌ ՀԱՄՈՐԷՆ ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՍ

ՄԱ



Կ. ԳՈԼԻՍ 28074-62

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1874

9

263
Է 3

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Զգոյշ լերուք մի որ իցէ՝ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ և սնոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարերց աշխարհիս՝ և ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի. Զի ի նմա բնակէ առկնայն յրումն աստուածութեանն մարմնապէս : (Կողոս. Բ. 8, 9) :

Աստուածաշունչը, և բնութիւնը մեզի մշտընչե- նաւոր և անփոփոխ Արարիչ մը կը քարոզեն յաւի- տենից մինչ յաւիտեան որ այս է մեր գոյութեան առաջին պատճառը, ինքն յաւիտենական ըլլալուն համար՝ յաւիտեանս նոյն է : Անփոփոխ է իր ամեն ստորոգելիքներուն մէջ, նայէ երկնից հաստատու- թեան և լուսաւորներուն տրուած կանոններուն, կրնաս ըստ մը անոնց փոփոխութիւնը տեսնել :

Ինքը անփոփոխ է՝ իր սրբութեանը, իր արդա- րութեանը, իր ողորմութեանը, մարդասիրութեանը, կանոններուն և իր խօսքին մէջ :

Այս յաւիտենական արարչին, որ մենք Աստուած անունը կուտանք, բայց ինքը իր անունը Որ է՞ն է ըստ Մովսէսին : (Ելից. զլ. Գ հմր. 14) :

Մեր յաւիտենական արարիչը՝ իւր բոլոր արա- րածներուն վրայ օրէնք դրած է, և չիկայ մէկ ա- րարած մը՝ որ իր վրայ օրէնք չունի: Եւ չի կրնար արարած մը իր գոյութիւնը պահել Աստուծոյ օ- րէնքին հակառակ գործելով: Այս է որ մենք բնա-



489-60

28 482

9-

կան օրէնք անուն կուտանք՝ և բնութեան մէջ ամեն ժամանակ կը տեսնանք :

Արարիչը բանական էակներուն վրայ ալ դրած է իր օրէնքները, բնական և բարոյական, որուն որ ամենը յայտնութիւն, կամ Աստուածաշունչ անուն կուտանք, թէ որ Աստուած բնութեան մէջ իր դրած օրէնքը՝ զբաւոր քարեղէն տախտկներով չը տար մարդոց, և միայն բնութեան մէջ դրուածով թողուր՝ մարդոց պատճառները զիրենք անմեղ պիտի սեպէին. և բնութեան մէջ դրուած օրէնքներուն իմ խելքս չի հասնիր պիտի ըսէին : Բայց Քրիստոս երկու օրէնքն ալ Աստուծմէ է կըսէ. Յիսուս ըսաւ անոր, (Փարիսեցոյն) «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ, և քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ : Այս է առաջին ու մեծ պատուիրանքը» : Ու երկրորդը ասոր նըսան «Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս . Այս երկու պատուիրանքէս կախուած են բոլոր օրէնք և մարգարէք» : (Մատթ. ցլ. ԻԲ. հմբ. 37, 39.) :

Քանի որ Աստուածաշունչ սուրբ զիրքը՝ այս երկու պատուիրանքէն կախուած է, կ'ըսէ. իր մէջը բնաւ հակասութիւն չի կայ. ամենը ճշմարտութիւն է . Այս սուրբ օրէնքները բռնողը իր վարձքը պիտի ստանայ, աւրոզն ալ իր պատիժը պիտի ընդունի : Թէ որ ուխտով ապաշխարիէ՝ և իրեն համար պատրաստուած փրկչի քառութեան հաւատայ՝ պիտի փրկուի : Թէ որ հրեշտակներու ձեռքովը խօսուածը հաստատուեցաւ՝ կատարուեցաւ .

որովհետև «Ամեն յանցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհասին» :

Այս ճշմարտութիւնը կը պատմէ մեզի Սուրբ զիրքը ըսելով՝ «Թէ որ Աստուած մեզը գործող հրեշտակաց չինայեց, հապա խաւարին կապերով տարտարոսը ձգած դատաստանի պահել տուաւ» : (Բ. Պետր. Գ. 4—9) :

Եւ մեր նախածնողը իրենց տրուած Աստուծոյ օրէնքը չի պահելուն պատճառաւ ալ Եղեմական պարտեղէն դուրս ձգուեցան, որ կենաց ծառէն չուտեն՝ և յախտեան չապրին : Ինքը և իր զաւակները այս վիճակին մէջ հասան, և այս վիճակը իր առաջին՝ եղբայրը սպաննող Կայենին վրայ տեսաւ :

Աստուծոյ բանը սուրբ Կուսէն մարմին առնելով խաչին վրայ մեր մեղքերուն համար մեռաւ, երեք օրէն յարութիւն առաւ, իրեն աշակերտներուն բառասուն օր երեւակէն վերջը, երկինք համբարձաւ, Աստուծոյ աջ կողմը նստաւ :

Իր խոստացած սուրբ Հոգին իրեն հաւատացեաց խրկեց, և անոնց քարոզութիւնովն Եկեղեցին հաստատուեցաւ Առաքելոց և Մարգարէից քարոզած հիման վերայ, և տարածուեցաւ ազգերու և լեզուներու մէջ :

Սուրբ զիրք՝ Քրիստոսի եկեղեցոյ կամ ժողովուրդեան այս անունն ալ կուտայ, Նոր արարած՝ «Զգնուլ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյն հաստատեալ է՝ արդարութեամբ և սրբութեամբ ճշմար-

տուժեանն :» (Եփես. Գ. 24. Գաղ. 2. 15) :

Հայոց եկեղեցին ալ իրեն նոր իսրայէլ անունը կուտայ, մեր Արարիչը իր ստեղծած ամեն բաներուն վրայ օրէնք կը դնէ, և միայն նոր Արարածներու վրայ օրէնք, կանոն, պատուիրոնք չի դնէր :

Աստուծոյ եկեղեցոյ կողմանէ, Քրիստոսի հաւատացեալներուն վրայ դրուած օրէնքներն՝ Աստուծոյ զաւակներուն վայելուչ օրինաց ստուէրներն են : Ռրոնց մէկ բանին կը գրեմ :

« Եղերուք զուր կատարեալ՝ որպէս ձեր երկնաւոր Հայրն կատարեալ է » :

« Այնպէս լուսաւորեսցեն լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս՝ և փառաւորեսցեն զՀայրն ձեր որ յերկինս է » :

« Եւ եղիցին սոքա մի՝ որպէս և մեր մի եմք » :

« Եղերուք սուրբ՝ քանզի և ես սուրբ եմ » :

«Սուրբ արա զնոսս ճշմարտութեամբ քով՝ զի քո բանդ ճշմարտութիւն է » :

« Պատուիրանն նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս » :

« Յայսմ զհտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս » :

« Այլ ոչ վասն նոցա (առաքելոց համար) միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւ նոցա յիս. Զի ամենեքին մի իցեն, որպէս դու Հայր յիս՝ և ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն, զի և աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու առաքեցեր զիս » . և այլն . Յով. ԺԷ. 20—21 .

Երբոր եկեղեցին Տէրոջը կանոնները, օրէնքները և պատուէրները մէկդի դրաւ, այն է՝ « ճշմարտութեան սէրը », ահա անոր սոսկալի վիճակը, Քրիստոսի բարոյական մարմինը՝ մաս մաս պառակտած, մէկը ես պօղոսեան եմ, միւսը ես ապօղոսեան եմ. մէկն ալ առաջինը ես եմ կը պօռայ, մէկն ալ օրթօտօքսութիւնը իմ մէջս է կը կանչէ : Բայց այս վիճակին մէջ Քրիստոսի Աւետարանը եկեղեցիէն դուրս ձգուած չէ, այլ Մովսէսին երեսին քողը սուրբ գրոց վրայ ծածկուած, մէկ ձեռքը այս սուրբ մատեանը բռնած միւս ձեռքը բռնութեան սուրբ, ով որ մարդոց պատուէրներուն ծերոց աւանդութիւններուն դէմ կը խօսի՝ անոր վրայ կը յարձակի հոգևոր (բանադրանքով) և մարմնաւոր զէնքով՝ իրմէ դուրս կը ձգէ : Այս ոչ թէ միայն եկեղեցին, և Քրիստոսի իշխանութիւնը յափշտակող անօրինութեան մարդուն գործն է, այլ անոր ըրածներուն առեւն ըսողներուն՝ և անոր հետևողներուն բոլորովին ըրածը այս է . որ առաքեալին մարգարէութիւնը կատարուած կը տեսնաս : (Բ. Պետ. Բ. 1—22 :)

Կողոպտիչը երբոր Աստուծոյ ժողովուրդին մէջէն Քրիստոսի տուած օրէնքները դուրս ձգուած տեսաւ, իր պիղծ ամողը Աստուծոյ տանարին բեմին վրայ դրաւ, և սկսեց Աստուծոյ հաստատած օրէնքները խանգարել, եկեղեցոյ պարզները իրեն սեպհականել, այս ալ բաւական չի սեպելով՝ Քրիստոսի արտօնութիւնները իրեն սեպհականել

ուզեց, և հոս չի մնաց իր գործը՝ այլ առաջ տարաւ իր ձեռքի բռնութիւնովը, և շատերը իր անառակութեանը հետևեցան, և իր արքանեակները ամեն Ազգային եկեղեցեաց մէջ ցրուելով՝ Քրիստոսի փոխանորդին օրէնքները ընդունեցին, զանազան պատճառներով :

Հայաստանեայց սուրբ եկեղեցին երկար ժամանակ զգուշութիւն ըրաւ և հեռու կեցաւ՝ զլուսը բաշած առանձին, երբոր Արևմուտքէն թագաւոր բերուեցաւ Կիլիկիա՝ ճիզվիթներուն դուռ մը բացուեցաւ Հայոց վանքերը մտնալու : Սալլանդեանին պատմութեանը նայելով հարիւր տարի պապականութեան մէջ մնաց Հայոց եկեղեցին : (Կրօնագիտութեան մէջ զրուած է :)

Հայաստանեայց սուրբ եկեղեցին շուտով թոնուեց իր պարանոցէն Ապստամբին սոսկալի լուծը, բայց անոր Աւետարանին հակառակ վարդապետութիւնները չի կրցաւ իւր մէջէն դուրս նետել Քրիստոսի խարազանաւը . որովհետև իւր մէջ ապստամբի զաղափարին առեւն ըսողներ շատ կային :

Եւ այսօր ալ նոյնը կը տեսնենք բոլոր եղածներուն մէջ . ապստամբութիւնը համարձակ և պարզ յայտնուած է . բայց մէկ բանի զոհերու կարօտ է . որովհետև առանց զոհի փրկութիւն չի կայ կը պօռայ՝ զրական և բնական օրէնքը : Աւետարանը ընդունուած է հեծանոսներէն, բայց որի միջոցաւ, Քրիստոսի Հոգին կրող վիպյներուն աշխատութիւ-

նովը և ջանքովը : Երբոր այս պակաս է, Քրիստոսի նախատինքը իր վրայ առնող չի գայ, այլ Աւետարանին ըսածը կը յայտնուի « Բանգի սիրեցին զփառս մարդկան՝ առաւել բան զփառս Աստուծոյ : (Յովն. ԺԲ. 42, 43.)

Մենք կը կարգանք որ Քրիստոսի եկեղեցոյն վրայ պատիժ մըն է այս երկպառակութիւնը, բաժանմունքները, տիրապետութիւնները նիւծապաշտութիւնները, և այլն . որովհետև միշտ կը տեսնենք խաւարը լուսէն զատուած : Այս է որ խաւարը լուսին հետ չի կրնար միաբանիլ, այս է Աստուծոյ գործը : (Ծննդոց Ա. զլխէն) : « փոխանակ զի սէրն ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին, և վասըն այնորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազդեցութիւն մոյորութեան՝ հաւատալ նոցա ստութեանն : (Բ. Թեա. Բ. 10 : Հոովմ. Ա. 18, 32 :)

Սիրելի և պատուական եղբայներս՝ անա այս է մեր առաջը կեցած Քրիստոնէական եկեղեցոյն վիճակը, և մեր բողոքականաց վիճակը . իրաւ է որ մենք Աւետարանին վրայ բաւական տեղեկութիւն ունինք, և մեր շատերս Հայոց եկեղեցոյն մէջ լուսաւորուած ենք, բայց Պետրոսին պէս տեսիլքի մը կարօտ ենք՝ որ մեր պարտաւորութիւնը և մեր յանցանքը տեսնանք, նա կը վախնար հեծանոսի մը տուն մտնելու, ինչպէս որ Երուսաղիմայ եկեղեցին ալ Պետրոս Առաքեալին վրայ գայթակղած էր, բայց Պետրոսին պատմութիւնը լսելով արթնցաւ Երուսաղէմի եկեղեցին, ինչպէս որ Պետրոս

ալ «Ելիր մորթէ ու կեր՝ Աստուծոյ սրբածը դուն խառնակ մի սեպէր» խօսքովը :

Եղբայրս՝ Թէ որ դուն հին եղբայրներուն մէկը չես նէ՛ հարցուր անոնց որոնք որ ամեն բարարներու և զիւղերու մեջ կան, իրենք Հայոց եկեղեցւոյն մէջ չարժընցան, մինչև անգամ բողոքական եկեղեցւոյն առաջին Երէցը՝ Հայոց եկեղեցին խոստովանած ժամանակը, « արիւնն Յիսուսի սըրբէ զմեզ զամենայն մեղաց », « Քրիստոս զնեաց զմեզ յանիժից օրինաց՝ վասն մեր եղեալ . . . » : Այս երկու բնարանը աստուածաբան մը չըրին զինքը :

Ուրեմն Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյն մէջն ալ կրնայ մէկը փրկուիլ, Թէոր Աւետարանին լըսէ : Բայց Տէրը մէր միտքերը բացաւ, և մեզի Ազատութիւն ալ շնորհեց, ո՛չ Թէ ճշմարտութիւնները, սուրբ գրոց համաձայն եղած մարդը աղօթքները, երգերը, մաղթանքները, և այլն, մէկ զի ձըգելու համար, որ Երկրորդ նամակիս մեջ գրած եմ մէկ քանիները օրինակի համար : Մենք միշտ վախնալու ենք խաւարին լոյս ըսելէն, և լուսին խաւար ըսելէն, « և որ հանէ անարգն ի պատուականէ իբրև զբերան իմ կոչեսցի, ասէ Տէր :



ՀՐԱԻԷՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆԱՄԱԿ ԵՐՐՈՐԴ

ԱՌ ՀԱՄՕՐԷՆ ԲՈՂԲԲԱԿԱՆ ԵՂԲԱՐՍ

«Եւ ասէր Յիսուս առ Հրեայնն հաւատացեալս. եթէ դուք կացջիք ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք. եւ ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ : (Յովն. Ը. 51, 52) :

Ահա՛ Աստուծոյ ժողովուրդեան անհրաժեշտ պարտաւորութիւնը, որ Քրիստոսի եկեղեցւոյն, խորհրդաւոր մարմինն է, չի կրնար իր զլխուն դէմ, անոր Աւետարանին հակառակ վարդապետութիւն ընդունիլ, որովհետև եկեղեցին առաքելոց և մարգարէից հիման վրայ հաստատուած է և որ Հոգին Սուրբ խօսեցաւ կը դաւանի բոլոր բորիստոնէական եկեղեցին : « Հաւատամք և ի Սուրբ հոգին որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յԱւետարանս : »

Աստուծոյ եկեղեցւոյն բոլոր հաւատքը, և դաւանութիւնը, Աստուածաշունչ սուրբ գրոց համաձայն ըլլալու է : Աստուծոյ եկեղեցին՝ անոր բանովը

կառավարուելու է: Երբոր եկեղեցի մը ծերոց աւանդութիւնովը, մարդոց պատուէրներովը կը կառավարուի՝ այն եկեղեցի սեպուելն է՝ ո՛չ, այլ անոր նոր անունն մը տրուելու է:

Բայց ափսոս որ Աստուծոյ եկեղեցին այս փոփոխին մէջ չի մնաց. առաքեալները հիմնեցին և առաքելաշաւիղ Հայրերը զարդարեցին և անոր մէջ երկար ժամանակ յառաջ գնաց Հայաստանայց եկեղեցին, որովհետև այն ժամանակը Քրիստոսի ամբողջ եկեղեցին դեռ մաքուր էր: Աստուծոյ ժողովուրդն երբոր Աւետարանին ճշմարտութեան սէրը բանի տեղ չի սեպել սկսեց՝ մոլորութիւնը շուտով և ուժով հասաւ իր վրայ:

Քրիստոս իր աշակերտներուն պատուիրեց որ ոսկի ու արծաթ չունենան, բայց եկեղեցւոյն վարժապետները՝ այսինքն կղերը, այնպիսի հնարքներ զըտան որ՝ ո՛չ մամոնային պաշտօնեաները և ո՛չ անոր սպասաւորները խորհած էին, որ Քրիստոս «ո՛չ կարեք Աստուծոյ ծառայել, և մամոնայի» պատուորեց: Բայց յայտնի պատուէր կայ որ, կալը ծեծող եզին բերանը չի կապուի, Աւետարան քարոզողը աւետարանէն ապրելու է կ'ըսէ:

Ասոնք ուրիշ պատեհութեան ձգելով՝ Աւետարանին հակառակ վարդապետութիւններուն վրայ խօսինք, ինչպէս Երկրորդ հրաւեր միտքեան նամակին մէջ խոստացայ:

ՔԱՒԱՐԱՆԻ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Մեղաւորներուն համար երկու բան հարկաւոր է, մէկը մեղքէն փրկուիլ կամ ազատուիլ, մէկն ալ մեղքին հատուցումէն և պատիժէն ազատուիլ: Առաջնոյն համար հրեշտակը Յովսէփին ըսաւ «Քանզի որ ինմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն սրբոյ է, Ծնցի որդի, և կոչեսցես զանունն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց»: (Մատթ. Ա. 20, 21): Ամենայն որ առնէ զմեղս ծառայէ մեղաց . . . Եթէ որդին զձեզ ազատեսցէ, ճշմարիտ ազատ լինիջիք:» (Յովն. Ը. 34, 36):

Այս փորձ մըն է, որուն ամեն ջերմեանդ քրիստոնեայ, և ամեն Աստուծոյ երկիւղը կրող եկեղեցական փորձառու է, որ շատ անգամ ապաշխարհանք դրած է իր ժողովուրդին և ամենքն անախալ կատարած են. բայց անցած խոստովանութեան ինչ որ լսեց՝ նոյնը լսած է այս վերջինին մէջ ալ: Որովհետև Քրիստոսի դիմել չը սորվեցաւ, իր մեղքերուն համար մեռնող փրկչին չդիմեց, որ այն սուրբ արիւնը մեզ ամեն մեղքէ սրբէ:

Աւետարանին փրկարար վարդապետութիւնը երբոր մէկ դի դրաւ Աստուծոյ ժողովուրդը, ապտամբութիւնը Քաւարան մը շինեց յաւիտենականութեան մէջ, որ մարդիկ իրենց ապաշխարհանքը չի քաշած մեռնին նէ մեղքերնին քաւարանին

մէջ վճարեն և եկեղեցին ալ անոնց շուտով քաւարանէն ելնելուն համար հոգոցներ, պաշտօններ պատարագներէն ալն. ընելով, կամ ընել տալով շուտ մը քաւարանէն ելլան որ Արքայութիւն երթան:

Քրիստոս երբոր իր հօրը փառքով կրկին դատաստան ընելու պատմութիւնը կրնէ, մարդոց համար դժոխք մը չըլլալուն՝ մեղաւորները սատանային և անոր հրեշտակներուն համար պատրաստուած դժոխքը կը դրկէ: Թէ որ մեծ մեղաւորներուն համար դժոխք չը շինեց՝ քաւարանը ո՞վ շինեց: Սուրբ զիրքէն մէկ վկայութիւնը մը կը բերէ պապականութիւնը, (Մատթ. Ե. 23, 26:) որ բնաւ տեղի չունի: Մէկն ալ Մակարայեցոց զիրքէն, որ Աստուածաշունչ չէ կրսէ՝ Աբբայի տպած Աստուածաշունչը:

Մեր եկեղեցին մեզի Քաւարան մը կը ցուցնէ Աստուծոյ տանարին մէջ Աստուծոյ նուիրեալ եկեղեցին հրեշտակաց բնակարան և մարդկան քաւարան է, և հանգանակը կը դաւանի «ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»: Երբ որ Աստուծոյ ժողովուրդը կը զղջայ իր մեղացը և կը հաւատայ որ «Արիւնն Յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց», ալ քաւարան երթալու ինչ հարկ կը մնայ, մեղաւորը սրբուեցաւ իր գործած մեղքերէն: Եթէ չի զղջար, և չի հաւատար Քրիստոսի, իրեն դժոխք կայ:

Ղազարոսին և մեծատան պատմութիւնը կարդն, «Մեռաւ Ղազարոս և հանգեաւ ի գոգն Աբբահամու, մեռաւ մեծատունն և թաղեցաւ և երաց զաչս իւր ի դժոխս»: Նոյնպէս աւագակն՝ «Այսօր ընդ իս իցես ի դրախտին» լսեց խաչի ալ փրկիչէն: Թէոր քաւարան ըլլար՝ ասոր հարկաւոր էր, որով հետև իր կեանքը աւագակութեան մէջ անցընելէն վերջը, խաչին վրայ իր ընկերին հետ Փրկիչը կը նախատէր:

Մանաւանդ այս աշխարհըը զործելու և փրկութեան աշխարհը է, յախտենականութիւնը հատուցումն առնելու պատրաստութիւն կայ: Քրիստոս մեր աս աշխարհս եկաւ մեզ փրկելու համար և ոչ թէ քաւարանը դրկելու համար:

Սուրբ պատարագ ալ կրնեն քաւարանէն լալու համար, որ եկեղեցին չի հաղորդուող զաւիթը ելնեն և աղօթեն, կը քարոզէ: «Եւ որ ոչ էք կարող հաղորդիլ Աստուածային խորհրդոյս, որ զրուսս ելէք և աղօթեցէք, կը քարոզէ: Երբոր կենդանիները չի հաղորդուելուն համար աղօթքներէն բաժին չունին, որոց դուրս ելէք կըսէ: Քաւարանէն ժողովուրդին ինչ բաժին կայ:

Մենք պատմութիւն չունինք ձեռքերնիս՝ որ զիտնանք թէ երբ կամ ինչպէս մտաւ Հայաստանեայց սուրբ իկեղեցւոյն մէջ քաւարանի վերաբերեալ մաղթանքները, աղօթքները, երգերը, որ Լամբրո-



նացին շատ անգամ կը գրէ. սրբատունները չեթե-
 յեկեռով լիցուած է: Թէ որ մէկ անգամ խաչին
 վրայ եղած պատարագովը մեղաւորը չի փրկուիր,
 անկէ վերջը հարիւր եպիսկոպոսաց մաղթանքը
 ոչինչ կըլլան, որովհետեւ մէկ փրկիչ մը կայ՝ որ
 խաչին վրայ մեղաւորներուն համար մեռաւ .
 «Եթէ մեղիցէ որ. ունիմք բարեխօս առ Աստուած
 զՅիսուս Քրիստոս զարդարն և զանարատ: Եւ նա
 է քաւածիւն մեղաց մերոց, և ոչ թէ մերոցն միայն՝
 այլ ամենայն աշխարհի»: Եւ Պօղոս առաքեալ
 կը գրէ Եբրայցւոց «Իսկ սա (Յիսուս Քրիստոս)
 զմին վասն մեղաց մատոյց պատարագ, և մշտըն-
 ջնաւոր նստաւ ընդ աջմէ Աստուծոյ: . . . քան-
 զի միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն
 ի մշտնջենաւորս: . . . ապա ասէ՝ Թէ զմեզ նոցա
 և զանորէնութիւնս նոցա այլ ոչ ևս յեշիցեց: Իսկ
 ուր թողութիւն է, ոչ ևս պիտոյ է վասն մեղաց
 պատարագ. «Ունիմք այսուհետեւ եղբարք՝ հա-
 մարձակութիւն ՚ի մուտս սրբութեան Արեամբն
 Յիսուսի, զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և
 կենդանի ՚ի ձեռն վարագուրին՝ այսինքն մարմնոյ
 իւրոյ»: (Եբր. Ժ. 12—25):

Հայաստանեայց սուրբ եկեղեցուն հանգանակը
 այն է՝ Հասնորամբ և զհատուցումն գործոց՝ արդա-
 րոց կեանք յաւիտենական և մեղաւորաց տանջանք
 յաւիտենական:

Հարցում մը կեղլէ մեր առջև՝ հսկից մտաւ
 Քաւարանի հողոց համար պաշտօն, և պատարագ
 մատուցանելը:

Այս խնդրոյն նկատմամբ մինչև ցարդ արտաքին
 վկայութիւն մը տեսնուած չէ, ուստի և միակ փաս-
 տերնիս Ս. Գրոց մէջ՝ այս խնդրոյն վերաբերեալ
 խօսք մը չըլլալն է: Եւ այժմ կը տէսնենք մեր օրո-
 վը թէ՝ այսպիսի հնարածին վարդապետութիւնք
 քնն եղանակաւ մուտք կը գտնեն Եկեղեցոյ մէջ.
 անա անարատ յրութեան վարդապետութիւնը,
 անա Հռովմայ պապին անախարականութեան վար-
 դապետութիւնը, մենք տեսանք ասոնք և ասոնց
 քննչպէս ընդունուիլը, այս կերպով ընդունուած է
 նաև Քրիստոսի փոխանորդն ըլլալուն, կապիւոյ և
 արձակելոյ իշխանութեան վարդապետութիւնը:

Ասոնք կրտսն թէ՝ որովհետև Քրիստոս Պետրոսին
 տուաւ մեծութեան պատիւը՝ որով և բոլոր Առա-
 քելոց զրուի կարգեց, և որովհետև պապն ալ անոր
 յաջորդն է, վասնորոյ բոլոր Եկեղեցոյն զրուին է:

Եթէ Պիոս Թ. յաջողեցաւ ԺԹ. դարուս մէջ ան-
 սխալակա վարդապետութիւնն ընդունել տալ, ալ
 քնն դժուարութիւն կար գլխաւորութեան վարդա-
 պետութիւնն ալ մտցնել եկեղեցոյ զաւրելուն,
 յորում իւր քարոզչաց խօսքն իր
 պատգամ կ'ընդունուէին:

Արտապիանի տպած վերջի ժամագրքին համարելով

28024-62



ասց ջանկին մէջ կը գրէ թէ Հատինք ուժերորդ դարուն ընդունեցին Ա. Կուսին վերափոխումը: Հոս Սալանդեանին կրօնագիտութեան զբոյժին մէջի գրուածը յիշելու ենք՝ որ Հայք մէկ դարէն աւելի պապականութիւնը ընդունեցին: Իրաւ է որ Հայք պապը չեն ընդունած, նոյնպէս քաւարան չեն ընդունած բայց անոր սերմը Հայոց մէջ տակաւին կեցած է, և անոր ըրածներուն հաւանութիւն տըւողները կը պաշտպանեն զանոնք:

ՍՈՒՐԲ ԳՍՏԱՐԱԳ ՏԵՄՆԵԼ

Սուրբ պատարագ տեսնալու է՝ զոնէ Կիւրակէ օրերը, այս՝ պապական եկեղեցւոյ կանոններէն մէկն է, որ չը տեսնողը եկեղեցւոյ դէմ կը մեղանչէ, որ խոստովանելու ալ է:

Բայց Հայոց եկեղեցին ասանկ օրէնք չունի, և խորհուրդին ժամանակը կը բարոզէ որ դարս ելնեն չի հաղորդուողները, « Եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ Աստուածային խորհրդոյս՝ առ դրունս ելէք և աղօթեցէք » ըսելով: Եւ այս անաւոր խորհուրդը անոնց՝ որ Քրիստոսը չեն սիրեր՝ որովհետեւ մեղքն է իրեն սիրելին, և չի կրնար այս երկու թշնամութիւնը միանալ լուսը խաւարին հետ, Քրիստոս բեկնարին հետ և այլն: (Բ. Կոր. Զ. 14, 18) Զի հաղորդողները դուրս ելլալէն վերջը՝ այս զգուշութիւնը կ'իմացնէ հաղորդողներուն « մըք

հաւատով կայք յանդիւնան, սուրբ սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ Քրիստոս արքայն, և շուրջ պատեալ զորք վերնականս:

Որովհետեւ այս ժողովըը մէկտեղ եկած է Քրիստոսի մահուան յիշատակութիւնը կատարելու, իր խոստումներին պէս Քրիստոս իրենց մէջն է: Ինչպէս որ առեփ կեռեգէն վերջը կը կարդայ խորհուրդը մատակարարողը, « Եւ արդ մեր Տէր ըստ արարմ հրամանատուութեան (Զայս արարէք առ իմոյ իշատակի խօսքն) յատաչ բերեալ զայս խորհուրդ՝ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ » որ ըսել է Քրիստոսի հետ միութիւն և սէր ունեցողները, մեղքը ատողները և մեղքին հետ պատերազմ ունեցողները միայն կրնան ճաշակել այս սուրբ խորհրդէն, բանի որ Քրիստոսի հետ բարեկամութիւն և սէր չունեցողները՝ աղէկ կրնեն որ անարժանութեամբ մերձեցողներուն պատիժէն հեռանան:

Բայց կրնանք Քրիստոնեայ մը իրեն համար խաչին վրայ մեռնող փրկչին մահուան յիշատակութենէն երկար ժամանակ հեռու կենալ, և իր սիրելի փրկչին մարմնոյ և արեան խորհրդէն հեռու կենալ, և Քրիստոսի իր փրկչին հետ իր ըրած ուխտը չը նորոգել, որ մկրտուած ժամանակ ուխտած է, աստանայէն հրաժարիլ և Աստուածգիտութեան լոյսին դառնալու: (Տիտ Բ. 11—14)

Գառնանք մեր ընծացքին, Հայ եկեղեցականք ա

265

269

սորվեցան պապական եկեղեցիէն պատարագ տեսնելու պատուէրը ժողովրդէան քարոզելու, որ ժողովուրդը կապատ ատնը կամ արճարանը, և կը հարցնէ՝ թէ պատարագին կոչնակը զարկին. թէ որ չէ ըսուի, սուրճ մըն ալ կը խմէ, վերջապէս անանկ ժամանակ մը եկեղեցին կ'երթայ, որ գաւիթը ելէք և հոն աղօթեցէքը կը լսէ, կը զրկուի այն խնդրուածքներէն, փառաբանութիւններէն, յորդորանքներէն, որ զիշերապաշտաման և առաւօտեան պաշտաման մէջ եղան, մանաւանդ Քրիստոսի յարուծեան տօնախնբութեան օրհնութիւններէն և փաբատանութիւններէն և յարուծեան Աւետարանը լսելէն զրկուեցաւ: Այս սուրբ խորհրդէն բաժին մըն ալ բաւարանի ժողովուրդին կը հանուի, որ եկեղեցին կենդանիները դուրս ելլալ կը պատուիրէ:

ՍՐԲՈՑ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Աստուծոյ վկայեալ սուրբերը յիշատակել կը պատուիրէ մեզի Աստուածաշունչը, որ անոնց հաւատքին պտուղները մեր գործքերուն մէջ ալ տեսնուի, սէրը, սրբութիւնը, ճշմարտութիւնը, Աստուծոյ ապաւինելը, մեղքին հետ պատերազմելը, համբերութիւնը և այլն: Ինչպէս որ կը կարդանք Եբրայեցոց ԺԱ. բովանդակ զլխուն մէջ առաջինները:

Բայց առաքեալը նոր տնտեսութեան մէջ ալ սա

կանոնը կուտայ ըսելով՝ «Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ հայեցեալը յես գնացից նոցա՝ նմանողը եղերուք հաւատոցն: Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս: Յուամունս պէսպէս և օտարածայնս միդանդաղիք, զի լաւ է շնորհօք հաստատել զսիրտս՝ և ոչ կերակրովք, որով ոչինչ օգտեցան որ այնպէսն զնացին: (Եբր. ԺԳ- 7, 9):

Հայոց եկեղեցին Սրբոց յիշատակութիւնը մինչև այսօր ալ կը կատարէ, բայց ցաւալի է որ տակաւին անոր արդիւնքը շատ քիչ կը տեսնուի: Ինչպէս են ասոնց պէս երգերը «Նաւապետ բարեգութ առ քեզ ապաւինիմ տուր ինձ ձեռն որպէս երբեմն ընդ Պետրոսին ի վերայ ալեացն, որ ծրփիմս ալեկոծեալ յանցանօք մեղաց և կեցո:

«Որ սիրելին քո զՂազարոս կոչեցեր ի գերեզմանէն՝ կոչեա և զՈեզ հոգւով ի կեանս և ողորմեաց:

«Կատարիչք հաճոյից կամաց աստուածութեանդ քո, զանձինս իւրեանց պատարագեցին ի վկայութիւն ճշմարիտ սիրոյ քո, և բուրեցին հոտ անուշից տերութեանդ քո, աղաչեմք լուր Տէր և ողորմեա:»

Շնորհակալ ենք Աստուծոյ որ այս մաքրութիւնները պահուած են մեր եկեղեցւոյն մէջ, և յատուկ յիշատակութիւններ ալ ունի՝ ինչպէս, Յարութեան կիրակիներ, սուրբ Համբարձման յիշատակութիւնը, Պէնտէկոստէի յիշատակութիւնը, և այլն, նոյն-

պէս սուրբ Կուսին ննջման յիշատակութիւնը, Եղիա մարգարէին Յովնան մարգարէին յիշատակութիւնը և այլն: Բայց տօնը տերունականը՝ ոչ ի պատուիրանէ յառաջ եկին, այլ ի սիրոյ. նոյնպէս Սրբոց յիշատակութիւնը: Ինչպէս որ Տէրունական տօնք Քրիստոսի սէրէն յառաջ եկած են, նոյնպէս Սրբոց յիշատակութիւնը՝ սրբոց վարքին նմանելէն յառաջ գալու է: Սուրբ Ստեփաննոսին մասունքը պարանոցդ կախելովդ, անոր վարքը բու գործբերուդ մէջ տեսնուի:

ՍՐԲՈՑ ԲԱՐԵՆՕՍՈՒԹԻՒՆ

Առանց միջնորդի մեղաւորին փրկութիւն չի կայ, որովհետև մեր յանցանքը յախտնական արդար Աստուծոյ օրէնքներուն դէմ է, և անոր օրէնքները անջնջելի են, Աստուծոյ օրինաց հակառակ գործողը՝ պիտի պատժուի, ասոր քաւութիւն մը հարկաւոր է, որ Աստուծոյ խօսքը տեղը հասնի. որովհետև Աստուած արդար է, և իր օրէնքները արդար են, մեղանշողը պիտի պատժուի: Մարդուս մէջ արդար մը չի կայ ամենքն ալ մեղանշեցին և Աստուծոյ փառքէն զրկուեցան. Աստուծոյ ինչպէս փրկչին մահուամբը ընտրեալ սուրբերը փրկուեցան. որովհետև Աստուծոյ և մարդոց միջնորդը Աստուծոյ անմեղ գառը ըլլալու է՝ « որ բառնա զմեզ աշխարհի »:

« Զի մի է Աստուած և մի միջնորդ Աստուծոյ « և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս, որ էտ « զանձն փրկանս ընդ ամենեցուն վկայութիւն ժա- « մանակաց իւրոց: (Ս. Տիմ. Բ. 5, 6):

« Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ, « զի յորժամ մահ լինիցի՝ ի փրկութիւն վասն առա- « ջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրա- « շիրեալքն ի մէջ բերել կտակագրոյն: » (Եբր. Թ. 15, 16):

« Եւ ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, « և ի հեղումն արեան նորա՝ առաւել խօսի բան « զհաբէլին: » (Եբր. ԺԲ. 24):

« Իսկ արդ նվ է որ դատապարտ առնիցէ, Յի- « սուս Քրոստոս որ մեռան մանաւանդ թէ յարուց- « եալ իսկ է, և է ընդ աջմէ Աստուծոյ որ և բարե- « խօս իսկ է վասն մեր: » (Հնովմ. Ը. 54):

« Ուստի և կենդանի առնել համօրէն կարող է՝ « զմատուցեալս նովաւ առ Աստուած, բանգի միշտ « կենդանի է լինել բարեխօս վասն նոցա: » (Եբր. Է. 25, 28):

« Որդեակը իմ, զայս զրեմ առ ձեզ՝ զի մի մեղի- « ցէք, և եթէ մնոյցէ որ ունիմք բարեխօս առ Աստուած զարդարն և զամարատն և նա է քաւու- « Թիւն մեղաց մերոց (Ղ. ցովհ. Բ. 1—2):

Մենք շատ տեղ կը կարդանք սուրբ գրոց մէջ սրբոց յիշատակութիւնը, և անոնց հաւատքին նը-

մաներու համար, ինչպէս որ գրեցինք սրբոց յիշատակութեան զլսուն մէջ: Բայց սրբոց բարեխօսութեան վրայ բառ մը չենք գտնար, նաև մեր առաքել սշաւիղ Հայրերուն յօրինած հանգանակներուն, աղօթքներուն, շարականներուն երգերուն մէջ բարեխօսութեան բառ մը չենք կարգար:

Ետրհրդատետրին մէջ՝ սկիզբէն մինչև առէք կերէքին աղօթքը՝ մէկ տեղ միայն պիտի տեսնաս, և այն ալ վերջէն մտած ըլլալը՝ տղայ մը որ ուղղականը և սեռականը կը ճանչնայ՝ յետամուտ է պիտի ըսէ:

Էջմիածնայ միաբան Պետրոս եպիսկոպոս՝ իր յօրինած Աստուածանմանութեան գրքին միջնորդութեան ճառին մէջ կը գրէ, «Եւ թէպէտ Աստուածածին անուանի միջնորդ, բայց ոչ ընդհանրականի հաշտութեան այլ միաւորութեան երկուց բնութեանց ընդ սրում միջնորդութեամբ մաքուր արեան նորա եղև միաւորութիւն: Նոյնպէս կարգաւորն ասի միջնորդ ի մէջ մասնաւոր անձանց և այն շնորհաւ Քրիստոսի: Բայց ըննհանրական միջնորդ և բարեխօս մի է մարդն Յիսուս Քրիստոս (ճառ միջնորդութեան)»:

**ԲԵՐՍՅԻ ՆՈՐ ՇԻՆՈՒԱԾ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼՍԻ
ԵԿԵՂԵՅՈՒԹՅԱՆ ԱՍՈՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՔՍՐՈԶԸ**

«Քրիստէսման» սրբոց վկայ ընկերներ չեն ընդուններ, բայց մենք կընդունինք, կ'ըսէ, Քրիստոս կատարեալ

աստուած և մարդ չէ, այն Քրիստոս Աբրահամին մարմինը Սահակին, Յակոբին, Մովսէսին, սուրբ Կուսին, Անդրէասին և ամէն սրբոց մարմնոյն հաղորդեցաւ հիմա Հօրը աչ կ'ողմը նստած առած մարմնովը բարեխօսութիւն կընէ, ուրեմն բոլոր սուրբերը Քրիստոսի ձեռքովը բարեխօսութիւն կընեն» կը բարոզէ. . . Թէ որ միայն Քրիստոս է բարեխօսը ըսէ նէ, ինծի պէս ճէպը ստակ մը չունենայ պիտի խեղճ Եպիսկոպոսը:

Թէ որ սուրբ Գրոց մէջ, և եկեղեցւոյն առաքելաշաւիղ Հայրերուն ժամանակ սրբոց բարեխօսութիւն, և միջնորդութիւն չի կար նէ ինչպէս մտաւ վերջէն, ատոր վրայ պիտի գրեմ պատկերներուն վրայ գրած ժամանակս:

ՊՍՏԿԵՐ ԵՒ ԱՐՁԱՆ ՇԻՆԵԼ

Կը կարծուի որ դարբնութիւնը ծաղկելուն պէս սկսեց այս պիտանի արհեստը, որ Իսրայէլի արդիբը թափցու որդ մը շինելու և անոր պաշտօն մատուցանելու սկսեցին՝ զոր տեսած և սորված էին Եգիպտոս: Ռաբէլ իր հօրը կուռքը պահեց, երբ իր հօրը տունէն կը զատուէր: Դատաւորաց թէ. զլսուն՝ Միքա անուամբ մարդուն շինել տուած կուռքը, և զկտացի պանդուխտին քահանայ օրհնուելը կարգաւ: Եւ Մանասէ Աստուծոյ նուիրեալ տաճարին մէջ դրաւ կուռքեր, կամ

պատկերներ: Նաբուգոդոնոսոր պատկեր մը կանգնեց, և անոր մօտ մեծ հրարան շինեց՝ որ այլէ զայն չի պաշտողը, բայց երեք հրէայք տասնաբանեայ օրէնքէն սորված ըլլալով. (Ելից. Ի. 4, 6) պատկերին պաշտօն չի մատուցանելուն համար կրակը ձգուեցան, բայց Տէրը պահեց զանոնք.

Յաւալի է որ այս սովորութիւնը Քրիստոնէական եկեղեցոյն մէջ ալ մտաւ, որ արձաններու և պատկերներու պաշտօն կը մատուցուի, բայց Երբ մտնալուն կամ ինչպէս մտնալուն վերաբերեալ պատմութիւնը չունինք ձեռքերնիս: Միայն կենցաղ Քրիստոնէից զրքին մէջ՝ սա համառօտ խօսքը կայ «Պատկերք կուսանաց և սուրբ կուսին, պարկեշտութեան աղագաւ մտին յեկեղեցիս:» ասկից կը հասկցուի որ կանայք անոնց հագած զգեստներէն օրինակ առնեն:

Բայց Հայաստանեայց սուրբ եկեղեցին մաքուր էր այս բանէն: Երբ որ Վահան կաթողիկոս Կ. Պօլիս եկաւ, և կրկին Հայաստան դարձաւ, իրեն տրուած պատկերները եկեղեցին կախեց, Դիլայ ժողովքին ատեն կաթողիկոսութենէն հանեցին և արքորեցին կըսէ, Ստեփաննոս Ասողիկ իր հակաճառութեան զրքին մէջ:

Յունաց նախարարները երբ գործի համար Հայաստանէն կանցնէին՝ եկեղեցիները կը մտնային և կը հարցնէին թէ, ինչու այս ինչ սուրբին պատ-

կերը չունիք, անոնք աղքատութիւննին պատճառ կը բերէին և Յոյնք ալ պատկեր մը, և նոյն սուրբին պատմութիւնը ընծայ կընէին Հայոց, որ Փէշտըմալեան Գրիգոր վարժապետին սրբագրած և յայսմաւուրքէն վերուցած մէկ բանի պատմութիւնները ասոնց նման բաներ են:

Հայաստանեայց սուրբ եկեղեցին երեք սուրբ ժողովքները կընդունուի, այն է՝ Նիկիոյ Կ. Պօլսոյ և Եփեսոսի, որ պապականք և յունականք ասոնցմէ ուրիշ շատ ժողովքներ ընդունած են, ուր որ շատ աւելորդ բաներ մտցուցին եկեղեցոյ մէջ: Բայց Հայք անոնց դէմ բան մը չէին կրնար խօսել, որովհետև զօրաւոր Թագաւորներ կը պաշտպանէին Յոյները և Քաթոլիկները, որ անէծք մըն է եկեղեցոյն մարմնաւոր զօրութեան պաշտպանութեամբ կառավարուիլը, որովհետև Աստուծոյ եկեղեցոյն պաշտպանը Քրիստոս է:

Մարդոց օրէնք մը եղած է այն սոսկալի առածը «Արացուր զչարս զ' եկեղեցէ բարին», մասնաւոր անոնց որ զիտութիւնով կը գործեն. օրինակի համար՝ մեր սիրելի Հայ պապ սիսիք չեն զիտեր որ տասնաբանեայ օրինաց առաջին տախտակին երկրորդ օրէնքը Քրիստոնէականէն վերցնելը Աստուծոյ կամաց հակառակ է, որովհետև Աբբայի և Զօհրապեան Աստուածաշնչէն վերցուած չեն: Եւ ինչու համար չեն թողուր որ հասարակութիւնը



ուղղախառ թարգմանիչներրուն աշխարհաբառ
 թարգմանած սուրբ գիրքը կարգան, որովհետև ար-
 գիլած է պապուժիւնը: Նոյնպէս Հայ եկեղեցականք
 չեն գիտեր որ իրենց հրաշագործ պատկերները,
 թէ եկեղեցոյ մէջ դրուած՝ թէ հիւանդաց տարուածը
 անասկ զարուժիւն մը չունին, մանաւանդ պաշ-
 տաման ժամանակ իրենք կը բարոզեն « Աստուծոյ
 երկրպագեցուք » որ Քրիստոս փորձիչին յաղմեց՝
 տեսան Ստտուծոյ երկրպագցես և զնա միայն
 պաշտեսցես, ըսելով: Ասանց վրայ չորրորդ նամա-
 կիս մէջ գրելու խորհուրդ տեսնալուս համար հոս
 կը թողում այս ծայրը, և մեր ընծացքը յառաջ
 տանիմ այս տեղ:

Պատկերամարտից հալածոււմը կարծեմ ուժերորդ
 դարուն մօտ սխեց, որ Յունաց թագաւորները
 բոլոր պատկերները, արձանները, և անձներու
 վրայ գրուած պատկերները խորտակեցին և Հը-
 ուովմայի տաճարին վրայի Պետրոս աւարեալին
 արձանը խորտակեցին մարդ խրկելով: Ասոնք որ
 դէմ կեցած չէին թողուր խորտակել կը մնասուէին.
 մարմնահատուժեան բանտերու և արսորի դատա:
 պարտուելով: Ս. Սօֆիայի մօտ Կոստանդիանոս
 թագաւորին շինած զանձատունը՝ որուն մէջ մե-
 ծամեծ գրքեր կար անձիւ, և շատ հնուժիւններ,
 ուր որ երևելի գիտուններ կը պահուէին, անպու-
 ժեամբ հրոյ ճարակ ըրին մէջի: Իմաստուժիւններովը:

Այս սարսափելի հալածոււմը հարիւր տարիէն սուելի
 տեսց: Անա թագաւորաց կողմանէ զեկեղեցին
 պաշտպանելու կերպը:

Եւ հարիւր տարիէն վերջը Կոստանդիանոս թա-
 գաւորեց իր հօրը տեղ՝ որ փոքր տղայ մըն էր,
 և իր մայրը Երինէ փոխարքայ ընտրուեցաւ:
 Ժամանակին պատրիարքին խորհրդովը՝ եօթ-
 ներորդ տի՛գերական ժողովքը զուամարեցաւ.
 այս ժողովքը կրկին հաստատեց սրբոց պատկեր-
 ները, սրբոց մատունքները, սրբոց բարեխօսու-
 թիւնը, և վերջացաւ հալածոււմը պատկերա-
 մարտից:

Եւ ասոնք են բերուած վկայութիւնները. Աստ-
 ուած հրաման ըրաւ Մովսէսին որ երկու բերո-
 բէներ շինէ. հրաման ըրան որ կրօնական պաշտօն
 մատուցանեն: Մովսէս պղնձէ օձ մը շինեց Աս-
 տուծոյ հրամանաւը, որ օձէն զարնուողները անոր
 նայելով բժշկուին, բայց Եղեկիս թագաւոր կոտոր-
 տեց ու պղինձ ըրաւ, երբոր Քրիստոս պղինձէ
 օձը իր խաչը ելլալուն օրինակ կը բերէր Նիկողի-
 միսին, չըսաւ որ Եզ'իկիան կոտորեց պղինձէ օձը,
 որովհետև ժողովուրդը կրօնական պաշտօն կը
 մատուցանէր անոր:

Տեսաւես կինը Յիսուսի պատկերին պէս ար-
 ձան մը շինել տուեր է, իրեն բարեբարին թող
 շինած ըլլայ, բայց կրօնական պաշտօն մատուցնմ է

անոր: Յովհան օսկերերան գովեր է Քրիստոնէից
տախտութիւնը, որ բախակներու և մատանիներու
վրայ Քրիստոսի տնօրինութեան պատկերները
փորագրել կուտան, բայց երբէք չէ ըսած թէ
անոնց պաշտօն ալ մատուցէք:

Բարսեղ Աբրահամին զոհին նկարը տեսեր է նէ
լացեր է, ատանկ մեծ հաւատքով եղած պատմու-
թիւնը անգամ լսելով՝ լալը կուգայ մարդուն, ուր
մնաց նկարը տեսնալով, Կողմայի և Դամիանոսի
գերեզմանէն եղած հրաշքները կայն. կայն. օրի-
նակ բերելով՝ ժողովքին վճիռը այս է.

Եւ կարճաւօտ իսկ ասել զամենայն իսկ գաւան-
դութիւնս եկեղեցոյ զգրեալսն և զորս չենն ընդ
զրովք՝ անարատ պահեմք, յորոց մինն է յօրինու-
ածս պատկերաց: (Պատմ. Տիեզ. ժողովոց. 512):

Երբոր Լևոն Թագաւոր եղաւ Կիլիկիոյ, որ
Եւրոպացի արքայագուն սերունդէն էր, ճիզվիթ-
ներուն Հայաստան մտնալու դուռ մը բացուեցաւ
որոնք վանբերը մտան գիտութիւն սորվեցնելու
աղագաւ, որով պապականութիւն ալ սորվեցուցին.
(Պօրտին միսիօնարներուն պէս՝ որ Աւետարան կը
բարոզենք ըսելով, զմեզ Երիցախակ և Ժողովախակ
կերպարանքի խօթեցին). Սալանդեան Միքայէլ
վարդապետին կրօնագիտութեան զրքին նայելով,
հարիւր տարիէն աւելի պապական մնացին Հայք.
իրաւ մեծ երկարաւակութիւնով պապին տիրապե-

տութիւնը իրենց վիզէն թոթուեցին մէկ քանի
աւերադապաշտութիւններով, բայց երեք սուրբ
ժողովներէն վերջի Աւետարանին հակառակ վար-
դապետութիւնները չի կրցին դուրս ձգել: Մենք
բուն պատճառը չը գիտնալով ինչո՞ւ համար չը
ձգէրնուն, վրայ զանագան կարծիքներու կ'երթանք:
Անս մեր սիրելի ազգայնոց, պապականութեան ըս-
կըզքնաստրութիւնը, ասկից սկսած է՝ որ կ'աշխատին
Հայոց ազգը պապական ընելու, միսիօնարաց պէս:

Քսան և ութ տարւոյ չափ առաջ մայր եկեղեց-
ւոյն մէջ նորոգութիւն մը լինելով, պատերուն
վրայի պատկերները վերցուցին, և անոնց տեղը
Աւետարանէն կենդանութիւն տուող խօսքեր գրե-
ցին: Ասոր նման Տատեան Սիմոն ամիրայն իր
նստած գիւղը եկեղեցի մը շինեց և պատերուն
վրայ Քրիստոսի խօսքերը տուն տուն գրել տուաւ,
բայց երբ որ կարապետ պատրիարք իւր գաղա-
փաշը պապականութեան դարձուց, գուցէ անոնց
խրատովը, եկեղեցոյն պատերուն վրայի գիրերը
սրբել տուաւ, և տեղը պատկերներ կախեց: Ասոր
ստոյգ ըլլալուն վկայ կը կանչեմ իր հրատարակած
խրատ Առ Քահանայս ըսուած տետրակը, որ
Կրտռքիւն խոստովանանաց ըսուած զրքէն սորվելով
կրսէ, «խոստովանութիւն լսող քահանայն պէտք է
իր եպիսկոպոսէն ընտրուած ըլլայ, և ամեն քա-
հանայք խոստովանութիւն չի լսեն. որ Հայոց սո-

վորութիւնը գօտին կապած ժամանակը կուտայ այս իշխանութիւնը. ուրախ ենք որ չի լսուեցաւ: Կրնայ մէկը հարցնել որ՝ եթէ պապականութեան գաղափար ունէր, ինչո՞ւ հալածում հանեց պապական Հայոց՝ որոնք այնքան վնաս կրեցին Սէ ստացուածքի և թէ կեանքի: Այս իւր երկու սարկաւազներուն պապական ըլլալէն, և ուրիշ պատճառներէն յառաջ եկաւ: Ինչպէս որ Մատթէոս պատրիարքն ալ բողոքական կամ բարեկարգութեան գաղափար ունէր որ նոր նստած ժամանակն ալ բաւական բամբասուեցաւ, բայց Միսիօնարաց գրգռիչ ընծացքը՝ ամիրաները զայրացուցին, որք վարպետութեամբ իրենց խրկուած գրքերուն փաբեթները առին Մատթէոսին տարին, Դուն մեզ բողոքականն պիտի ընես որ այս գրքերը մեզի կը ղրկես ըսելով, կամ ասոնց հախեան կուգաս՝ կնամ հրամարականո՞գ կուտասը առաջը զրին: Պատրիարքը Միսիօնարներէն աւելի բան մը չըրաւ պատրիարքներն իրենց չի հնազանդողները կըբանադրեն. իսկ Միսիօնարք իրենց որոշման ղէմ գործողներուն ամեն ձեռում և վնաս կընեն, որ ձեր շատերը այս բաներուն տեղեակ են:

ՍՐԲՈՅ ՄԱՐԲԻՆՆԵՐ ԿԱՄ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ

Ննչեցելոց մարմինը պատուով Թաղիլը Աստուծոյ ժողովուրդին վերջին պարտաւորութիւնն է իր

ընկերին, որ այս սովորութիւնը կուպաշտ ժողովրդոց մէջ անգամ ըլլալը կը պատմուի, որոնք մեծ հանդէսով ննչեցելոց մարմինը կ'այրեն: Սուրբ գրոց պատմութիւնը մեզի Սառայի Թաղման նրկարագրութիւնը կընէ, Աբրահամ Գեղեի որդւոցմէն մամբրէի այրն կը խնդրէ որ իր կինը հոն Թաղէ: Աբրահամն ալ հոն Թաղեցին Իսահակ և Իսմայէլ: Յակոբ ալ Եգիպտոսէն մեծ հանդէսով հանեցին և Աբրահամու ծախու առած այրը Թաղեցին: (Ծննդ. Ծ. 7—14): Յովսեփ իր մեռնելու ժամանակը Իսրայէլի որդւոցը պատուիրեց որ իրենց Եգիպտոսէն ելլալու ատեննին իր ոսկորները հետեւնին տանին. անոնց յիշեցուց Աբրահամու եղած խոստմունքը: (Եբր. ԺԱ. 22 : Մովսէսին մարմինը Տէրը Թաղեց, որովհետև Անոր ծառայութիւն ըրաւ: (Բ. Օրի. ԼԳ.):

Հարկ չիկայ բոլոր նահապետներուն մարգարէներուն Թաղմանը վրայ գրել: Նոր կտակարանն ալ մէկ քանի Թաղման պատմութիւն կընէ մեզի:

Թագաւորն զՅովհաննէս մկրտիչ մեռցնել տուաւ Հերովդիաղայի խնդիրքովը, և աշակերտները Թաղեցին զայն ու եկան Յիսուսի պատմեցին: Քրիստոսի բարեկամ Ղազարոսին Թաղման պատմութիւնը կարդա: (Յովհ. ԺԱ.) Նոյնպէս Քրիստոսի Թաղման և յարուծեան պատմութիւնը: Սուրբ Ստեփաննոսի Թաղումը և մեծ կոծ ըլլալը կը պատմէ Ղուկաս, Յակոբոսին մահուան

պատմութիւնը կը կարդանք, Թաղման վրայ բան ճը չի պատմեր:

Կը հարցնեմ որ՝ երբ Յովհաննու Մկրտչի մար-
տիրան անոր աշակերտները Թաղեցին, ինչպէս մոռ-
ցան անոր մարմինէն մէկ քանի անդամ կտրելու:
Եոյնպէս Ստեփաննոսը Թաղող երկիւղած անձինք,
որուն գոնէ ողորմութիւն ժողովող երկու ձեռքերը
հարկելու էին, որ ազան կղերներուն շատ հարկա-
տոր էր: Այս ալ Թող հոս վերջանայ:

Քիչ մըն ալ շինցու մասունքներուն վրայ
գրեմ:

Արջընուց սուրբ Գէորդ վանքը գացի, բազմու-
թիւնը շատ ըլլալուն համար եկեղեցւոյն պաշտօն
հատարած տեղը տարին, տեսայ որ եկեղեցւոյն
ձախ կողմը՝ երկու գերեզմաններ կան, առաջնոր-
դին հարցուցի (որ քահանայ մ'էր) Թէ այս պա-
տին մէջի երկու գերեզմանները ո՞ր սուրբին են,
պատասխան չի տուաւ՝ ուրիշ խօսք վրայ բերելով:
Վանքէն դուրս ելայ և տեսայ որ վանքին պատին
վրայ՝ առատ ու մաքուր ջուրի աղբիւր մը կայ,
ուր զիւղացի կանայք ցորեն և լսթ կը լուան .
կը տեսնանա այս պատուական ջուրը ինչ քաղցր է,
որ ներսը պառկած երկու արջերուն բերնէն կը
բղխի, ըսաւ առաջնորդը: Այն ժամանակ յիշեցի
Յայտմուտքերին մէջի գրուած այն արջերուն հին
պատմութիւնը՝ որոնց վրայ վանքին վախճանեալ

առաջնորդը շատ լացեր է, Թէ ինչո՞ւ վերցուցած է
անոր մէջէն Գրիգոր վարժապետ:

Հոգւոց վանքին գերեզմանն ալ արջ մը Թաղած
են, որ վանքի տէր Մկրտչի կինը պարծենալով
կըսէ՝ արջը օրհնել տուի: Այս վանքը մոխրահան
ղև մը կայ՝ որ Մշոյ սուրբ Կարապետ վանքն ալ
կ'երթայ երբեմն, ուզած կերպարանքը կը մտնայ,
երբեմն պառաւի. երբեմն երիտասարդի կերպա-
րանքը, բովէդ կանցնի բեզ չի վնասեր, Թէ որ
հետաքրքիր ըլլաս ու ասիկայ հով է ըսելով նայիս,
այն ատեն կը վնասէ:

Յոյնք սուրբ Յակոբայ վանքը մերն է ըսելով՝
շատ պարտքկան ըրին վանքը, Անդրիանուպօլսեցի
Պօղոս եպիսկոպոս՝ որ Երուսաղիմայ փոխանորդ
էր, կառավարութեան Ստեանը Յունաց հետ դա-
տաստանի ելաւ, ուր պօռաց Թէ Յոյները Քրիս-
տոսի գերեզմանէն ճրագի լոյս կը հանեն և ճշմա-
րիտ լոյս է ըսելով ժողովուրդը կը խաբեն, և այս
խօսքը մինչև իր վախճանը միշտ կը խօսէր Թէ
եկեղեցւոյ մէջ և Թէ դուրսը: Երբ որ պարտքը
վանքին վրայ ծանրացաւ՝ ազգէն ստակ ժողվելու
համար վարդապետներ ղրկուեցաւ ամէն տեղ ուր
որ Հայ բնակիչ կը գտնուէր:

Մուխալըճցի Յակոբ վարդապետ որ Նիկովիդեայի
վիճակը եկաւ, իր ամեն քարոզին մէջ Յունաց
չարութեանցը վրայ կը խօսէր, երբ լսեց որ սուրբ

Պանդալեոնի վանք մը կալ Նիկոմիդեայի մէջ և Հայոց ժողովուրդը ընծայներով հոն կ'երդան ուխտի, շուտով շրջակայ տեղուանք զրեց որ ինքը Նիկոմիդեայի եկեղեցոյն Պանդալեոնի մասունք բերած է՝ հոն ուխտի գան, և չերթան յունաց վանքը: Արծաթ տուփի մը մէջ դրած կարծուած մասունքը՝ աւագ երէցին կուտայ. ուխտաւորները կսկսին գալ: Այս միջոցին Կեսարացի Պօղոս եպիսկոպոս Նիկոմիդեայի առաջնորդ կընտրուի:

Բոլոր վիճակին այցելութիւն ընելէն վերջը՝ եկեղեցոյն ունեցածները նայելու ժողովք մը գումարեց Նիկոմիդեայի մէջ, ամեն բան զրուելէն վերջը՝ կարգը մասանց եկաւ, երբ Պանդալեոնի տուփը ձեռքը եկաւ՝ հարցուց ուսկից ըլլալը և պատմեցին որով տուփին զմուռը քակեց, ու տեսաւ որ մէջը նշխարքի մը կտոր կայ, այս կրօնասէր անձը՝ բերանը բացաւ այն խաբեութիւնը ընող ժողովարարին դէմ և չըսած ծանր խօսքը չի մնաց: Մասունքը աւագանը ձգել տուաւ. և այս ժողովքին մէջէն ականատես երեք անձինք կան այսօր ողջ:

Չմիւռնիացի Ստեփան վարդապետ Նարլը գափուլի քարոզիչ էր, իր փոքրաւորին հետ Էյրի գափուլի յունաց եկեղեցին կ'երթայ, ժամակոչը ամեն տեղ պտտցնելէն վերջը ննջեցելոց ոսկորի մրթերանոցը կը տանի, ուր սակառներու մէջ դրուած են բոլոր ոսկորները, ժամակոչին ստակ կուտամ

որ մոմ բերէ, մինչ այն բերելու ըլլայ շուտ մը մաքուր ոսկորներ և զլուխ մը Թաշկինակին մէջ կը դնէ ու փոքրաւորին կուտայ. երբ մոմերը կը բերէ հոգւոցով մը կը վառէ և ժամակոչը օծտելով իր խուցը կուգայ: Գլխուն անունը Գրիգոր Ակրականդացի կը դնէ, ու շուտով մէկ քանի տեղերը արծաթով զարդարելէն վերջը՝ կսկսի հրաշքներ ընել, Չինկեանէ կնոջ մը զաւկին կոյր աչքը կը բացուի. զինետան սպասաւոր մը դիւահարութենէն կառողջանայ, և այլն. վերջապէս Յակոբոս պատրիարքին կը ծախէ այս շինցու մասունքները: Այս զինեմոլ անձը իր համարումը կորսնցուց ազգին մէջ և Կաթողիկ եղաւ իր ծերութեանը ատեն ու անանկ մեռաւ:

Ատոնց պէս ըրին շատ անգամ Տաճկաց վարպետորդիները, մանաւանդ պատերազմական զօրքերը և *սեշիպաշ* ըսուած զօրքերը, որ հին փաշաները կամ գաւառի մը իշխող ապստամբ պէյերը կը պահէին: Ատոնց ձեռքը տեսակ մը քար անցած է, որ ջուրը ձգես երեսը կելլէ կրակը ձրգես չայրիւր, այս քարէն կտոր մը տոգէտ քահանաներուն ստակով կը ծախէին՝ որոնց փորձն ալ ջուր ու կրակ էր: Այս բանին Պօլոյ մէջ ալ լինելը կը պատմեն. Երևելի զօրական մը (Չեռտիչէ ըսուած) արծաթ խաչաձև մասնատուփ մը շինել կուտայ և անուանի Յոյն եպիսկոպոսի մը անուամբ զմուռ

մը փորձել տալով իր քովը կը պահէ, և իր մէկ Հայ բարեկամին կը պատմէ թէ՛ պատերազմին ժամանակ եկեղեցի մը կողուպտեցին զօրքերը, ու ես ալ սեղանին վրայէն բան մը գտայ լաժերով փամտուած, առի և բացի որ մէջը բառանկիւնի արծաթով շինուած բան մը կար՝ զիտցայ որ յունաց պաշտելի մէկ բանն է. ելայ վրանս եկայ ու մաքուր տեղ մը պահեցի, այս միջոցին սպասաւորս ծանր հիւանդ եղաւ ու բժիշկ բերինք, իմ միտքս եկաւ որ յոյները այսպէս բաներով կը բժշկուին՝ առի հիւանդին զլխուն տակը դրի ու շուտով առողջացաւ, և շատ մը ուրիշներ ալ առողջացան ասով իրենց հիւանդութիւնէն. երբ որ Պօլիս եկայ՝ տանս սենեակին մէջ մաքուր պահարանի մը մէջ դրի, զաւկիս մէկն ալ տկարացաւ ան ալ շուտ մղ առողջացաւ:

Օր մը կնոջս հետ նոյն սենեակը նստեր էինք յանկարծ շարժ մը եղաւ ուրիշներուն հարցնելով տեսանք որ՝ միայն մեր սենեակը շարժեր է: Կինս սկսեց վախնալ և ըսաւ որ շուտով կամ այն սուրբ բանը տունէս դուրս հանեմ, կամ ես ելլամ տունէս. ահն բեզի բերի, ան յոյնի մը ծախէ՝ ըսելով մամաատուփը կը ձգէ ու կ'երթայ: Այս ջերմնուանդ անձը մէկ քանի բարեպաշտ անձանց հետ կը փորձեն և մէջի գիրը յոյնի մը կը կարդացնեն, ու մարդը կուգայ և շատ ստակ առնելով կը ծախէ իր հնարած սուրբ բանը:

Սա պատմութիւնը ընեմ ձեզի որ զարմանքով պիտի լենաք. Վանայ մօտ գաւառի մը մէջ՝ կոյս մարգարէ մը կը յայտնուի, նոյն զիւղի քահանային վարպետութեամբ, քահանայն պաշտօնը կատարելէն վերջը ծանուցում կրնէ ժողովրդեան թէ՛ մարգարէն ժամ պիտի գայ ամենուն իմաց տուէք ըսելով դուրս կ'ելլայ. շուտով տուները իմաց կուտան և բոլոր զիւղացիք եկեղեցին կը լեցուին: Մարգարէն մեծ յարգանօք եկեղեցին կը մըտնէ ամռուի մը վրայ կը նստի, երբ որ խօսիլ կսկսի վրան լոյս կիջնայ, որովհետև քահանայն հայելիով մը արևուն լոյսը ժամուն մէջ կուտին վրայ կը փայլեցնէ. այս խաբէութեամբ տգէտ ժողովուրդը կը զարմացնէ, մարգարէն քանի մը ֆաշճիի պատմութիւններ սորված էր Տէրտէրէն: Գաբրիէլ եպիսկոպոս Վանայ առաջնորդը որ ետքը Աղթամարայ առաջնորդ կամ կաթողիկոս եղաւ, շուտով մէկ քանի ոստիկանութեան զինուոր ղրկել տուաւ ու Վան բերին զմարգարէն որ քահանայի մը խոստովանելով ամեն բան յայտնի եղաւ և հաստատուեցաւ որ վարժապետը գեղին քահանայն է և իր ապրուստին համար այս խաբեբայութեան զիմեր է, որովհետև ոչխար, գառ, իւղ և այլն. տալ կը սորվեցնէ Գիւղերէն: հազարաւոր մարդիկ այր և կին Վան կուգան Բղեշխէն իրենց մարգարէն կուգեն. Գաբրիէլ եպիսկոպոս

կամուսնացնէ մարգարէն ու բանը կը վերջանայ: Աս շատ տարուան բան չէ, եղելուծին մընէ և շատերուն յայտնէ է:

Ասոնց նման բաներ Թէ որ գրուելու ըլլան՝ մեծ տետրակներ հարկաւոր էր, բայց եթէ ժամանակ ունենանք չորրորդ տետրակով մը անոնց վրայ պիտի գրեմ, որպէս զի ալ եկեղեցւոյն զլուխ կարգուածները իմանան որոնք չեն ուզեր ասոնց վրայ խօսք մը լսել, Վանեցւոյն ըսածին պէս, կըսեն Վանեցւոց Թէ ինչո՞ւ խելահաս մէկ բանի անձինք չէք երթար առաջնորդին ըսել որ սուրբ Գևորգայ վանքէն այն արջերը վերցընէ, ինչ կըսես, Թէ որ մըտքէդ անցնիլը իմանան՝ ծովը կը նետեն մարդը կը պատասխանէ:



ՎԵՐՉԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական կրօնքին հեղինակը՝ կը պատուիրէ իրեն հնազանդող աշակերտներուն, որ « երթան հեթանոսներուն քարոզեն, և ըսաւ, զացէք բոլոր աշխարհ և Աւետոքան քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն »: (Մատթ. Ժ. 2. 13): Քրիստոսի հաւատացեալները այս պարտաւորութիւնը իրենց վրայ առած են իրենց Քրիստոսը ընդունած կամ մկրտուած օրը, ինչպէս որ առաքեալն ալ կը պատուիրէ:

Իւրաքանչիւր ոք որպէս և ընկալաւ շնորհս ինչ իմիմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարւօք հազարապետս պէս պէս շնորհացն Աստուծոյ: Եթէ որ խօսեսցի իբրև զԱստուծոյ պատգամս, եթէ որ մատակարարիցէ իբրև ի զօրութենէ զոր շնորհէ Աստուած, զի յամենայնի փառաւորեսցի Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն: Ա. Պետր. Գ. 11:

Այս մատակարարութեան պարտաւորութիւնը մենք մեր տնէն, մեր ազգէն, մեր քաղաքէն, մեր երկրէն սկսելու ենք, « և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և Թողութիւն մեղաց յամենայն ազգս սկսեալ յԵրուսաղիմէ »:

Մեր Երուսաղէմը մեր սիրելի Ազգն է, մենք
 մեր Փրկչին պատուէրը պարտաւոր ենք պահելու,
 չենք կրնար մեր սիրելիները ձգել և ուրիշներուն
 օգնել մեր օգուտին համար, և քրիստոնեայները
 կրկին քրիստոնեայ ընել, որոնցմով պատիւ և
 ապրուստ գտնայ: Այս սոսկալի վճիռը տուած է
 մեզի Աստուծոյ բանը, այն որ իր մերձաւորներուն
 խնամք չի տանիր՝ հաւատքէն զրկուած է, և այն:

Սիրելի եղբայրներս, մեր փրկութիւնը Քրիստոսով է, թէ որ մեզի պէս մեղաւորներուն ողոր
 մութիւն ըրաւ Տէրը, ու իր սուրբ խոստմունքը
 մեզի ճանչցուց և Աւետարանին հակառակ վար-
 քապետութիւնները մէկ դի դրինք, մեր սիրելի
 եղբայրներուն չի կրնար ողորմիլ և անոնք ալ
 կանչել իր ճշմարտութեան մէջ: Այն անոնք ալ կըր-
 նայ իր հոգիովը սրբել՝ որ կարող ըլլան պապա-
 կան և յունական աւելորդապաշտութիւնները եկե-
 ղեցիէն դուրս հանել, և ինչ որ սուրբն Փրկոր
 շուսաւորչէն և առաքելաշաւիղ Հայրերէն մեզի
 պաւանդուած են, անոնցմով մեր երկրպագութիւնը
 կատարել Աստուածաշնչոյ և սուրբ գրոց համա-
 ձայն: Ասոնց վրայ առաջ գրած եմ ձեզի ուղղած
 երկու նամակացս մէջը:

Այս խորհուրդը պէտք էր որ՝ մենք հալածման
 ժամանան ունենայինք, ան ատեն շատ աղէկ պի-
 տի ըլլար որովհետև մեզի առաջնորդողները կու-

զէին և տակաւին կուզեն որ մեր լուսաւորիչները
 սեպուին, և աշխարհի հաւատացնեն թէ Հայոց
 ազգը մենք հաւատքի բերինք. բայց Հայք սուրբ
 Թաթէոս և Բարթուղիմէոս առաքեալներն ունին
 լուսաւորիչ:

Եղբայրներս վեշտասաներորդ դարուն բարե-
 կարգուած Քրիստոնեայք մեր շուրջը կեցած են,
 անոնք պապական հանգանակները և Աւետարանին
 համաձայն ինչ որ կար պապական եկեղեցւոյն մէջ,
 զանոնք առին ու դուրս եյան: Ասիկայ բաւական է
 մեր Ազգին օգնելու և գրինակ ըլլալու:





Ե, Վ. Ք.



1771
The first of the month of June 1771
at the City of New York
I the undersigned
do hereby certify
that the within and
above written
is a true and
correct copy
of the original
as the same
now lies on
the files of
the said
City of New York

Witness my hand
and the seal of
the said City
this 1st day of
June 1771
John W. Livingston
Mayor of the
City of New York



« Ազգային գրադարան



NL0115172

